



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը ՁԻԱՅ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է

Երևան, Հայաստան-2009թ. դեկտեմբերի 1. Այսօր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ մամուլի ասուլիս՝ նվիրված ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան:

ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն առաջին անգամ կազմակերպել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 1988թ. դեկտեմբերի 1-ին: Այդ ժամանակից ի վեր ամեն տարվա դեկտեմբերի 1-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օր՝ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդրի նկատմամբ հասարակության լայն խավերի ուշադրությունը գրավելու, կանխարգելման ոլորտում նոր կազմակերպություններ, խմբեր և առանձին անհատներ ներգրավելու համար: Այս օրն ամեն տարի նշվում է զանազան կարգախոսների ներքո, որոնք արտացոլում են ընթացիկ ժամանակաշրջանի կենսական խնդիրները: Այս տարի ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն անցկացվելու է «Համընդհանուր հասանելիություն և մարդու իրավունքներ» կարգախոսի ներքո:

Այս կարգախոսն ընտրվել է՝ ընդգծելու ՄԻԱՎ վարակի համաճարակին հակազդման գործում կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիության և մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը: Սա նաև կոչ է երկրներին՝ վերանայելու ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, կանանց և խոցելի խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունք առաջացնող օրենքները:

2001թ. հունիս ամսին կայացած ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հարցերով հատուկ նիստի նպատակը ողջ աշխարհի համախմբումն էր ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի դեմ պայքարի համապարփակ խնդրի շուրջ: Այդ նպատակով ՄԱԿ-ի անդամ պետությունները, նրանց թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ընդունեցին «ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագիրը», որը դարձավ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ոլորտում միջոցառումների առաջին գլոբալ ծրագիրը:

Պետությունների ղեկավարների և կառավարությունների ներկայացուցիչների համաձայնությունը՝ աջակցել «ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագրին» կարևոր իրադարձություն էր ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի տարեգրության մեջ: Դրանով իսկ կառավարություններն ընդունեցին, որ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի դեմ պայքարում անհրաժեշտ են անհետաձգելի միջոցառումներ: Միաժամանակ կառավարություններն առաջին անգամ համատեղ ընդունեցին, որ ՁԻԱՅ-ը գլոբալ ճգնաժամ է և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարում հաջողության հասնելու համար պահանջվում են հետևողականորեն իրականացվող գլոբալ միջոցառումներ:

2006թ.-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին նվիրված մեկ այլ նիստին ընդունված քաղաքական պարտավորությունների հռչակագրով պետությունները նաև պարտավորվել են մինչև 2010թ. ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիություն:

«Համընդհանուր հասանելիություն և մարդու իրավունքներ» կարգախոսը միաժամանակ պետությունների իշխանություններին հորդորում է համապատասխան քայլեր ձեռնարկել՝ կյանքի կոչելու ստանձնած պարտավորությունները:

ՀՀ կառավարությունը՝ կարևորելով ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի խնդիրն ու հետևողական լինելով հռչակագրերի ընդունմամբ ստանձնած պարտավորություններին, հաստատել է 2007-2011թթ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագիրը, որը հաջորդում է նախորդ հնգամյա ծրագրին: Ծրագրի շրջանակներում ՀՀ ողջ տարածքում իրականացվում են բազմաթիվ կանխարգելիչ ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի և

երիտասարդության շրջանում, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով ապրող մարդկանց տրամադրվում է բուժում, խնամք և աջակցություն, իրականացվում է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, տրամադրվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, ապահովվում է դոնորական արյան անվտանգությունը, կատարվում են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ախտորոշմանն ուղղված լաբորատոր հետազոտություններ և այլն: Իրականացվող միջոցառումները համակարգվում են ՀՀ-ում ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից (ՄՀՀ): ՄՀՀ-ն բազմագերատեսչական հանձնաժողով է, որի 38 անդամների թվում են կառավարական ոլորտի 19, ակադեմիական ոլորտի 1, ՄԱՎ-ի գործակալությունների, երկկողմ և բազմակողմ զարգացման գործընկերների 5, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների 11 ներկայացուցիչներ, նաև՝ ՄԻԱՎ-ից և տուբերկուլոզից տուժած մեկական մարդ:

Իրականացված միջոցառումների արդյունքում, համեմատելով 2005թ.-ին և 2007թ.-ին իրականացված հետազոտությունների տվյալները, կարելի է փաստել, որ մեր երկրում տեղի է ունեցել թե՛ կենսաբանական, թե՛ վարքագծային ցուցանիշների բարելավում: Մասնավորապես, ՄԻԱՎ-ի տարածվածությունը հիմնական խոցելի խմբում՝ ԹՆՕ-ների շրջանում 9,3%-ից նվազել է մինչև 6,8%: ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող բոլոր խմբերի շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակի որոշակի աճ և ռիսկային վարքագծի դրսևորումների նվազում: Այս դրական տեղաշարժերը վկայում են բնակչության տարբեր խմբերում իրականացվող ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի արդյունավետության մասին, որոնց մեթոդական օգնություն և օժանդակություն է ցուցաբերում ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՅ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի արդյունավետության մասին, որոնց մեթոդական օգնություն և օժանդակություն է ցուցաբերում ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը: Իսկ արդյունավետ կանխարգելումը բուժման, խնամքի և աջակցության համար պահանջվող միլիարդավոր դրամների տնտեսում է:

ՄԻԱՎ վարակի համաճարակը շարունակում է ամեն տարի միլիոնավոր մարդկային կյանքեր խլել: Սակայն այսօր իրավիճակը փոքր ինչ փոխվել է այն առումով, որ շնորհիվ հակառետրովիրուսային բուժման ՄԻԱՎ վարակն այլևս անբուժելի փոխարեն համարվում է քրոնիկ հիվանդություն: Բուժման շնորհիվ հնարավոր է կառավարել ՄԻԱՎ վարակի զարգացման ընթացքը, երկարաձգել ՄԻԱՎ-ով ապրողների կյանքն ու բարելավել դրա որակը: Բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիության պայմաններում կարելի է արդյունավետորեն դիմակայել ՁԻԱՅ-ին և զգալիորեն նվազեցնել դրանից մահացությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելումը պետք է լինի տևական, անընդհատ գործընթաց. այն չի կարող ընդհատվել խոցելի խմբերի համակազմի անընդհատ փոփոխման, մարմնավաճառության, թմրամոլության առկայության, վարքագծի փոփոխման գործընթացի երկարատևության պատճառով: Բազմաթիվ երկրների, նաև Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նպատակաուղղված, համալիր միջոցառումների շնորհիվ, հնարավոր է կասեցնել համաճարակի զարգացումը, հասնել ՄԻԱՎ-ի տարածման տեմպերի նվազեցման և կայունացման: Սակայն այդ միջոցառումների արդյունավետության և ձեռք բերված արդյունքների կայունության գլխավոր նախապայմանը դրանց շարունակականության ապահովումն է և անհրաժեշտ միջոցների առկայությունը: Այս առումով անգնահատելի է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ռազմավարությունների իրագործման հարցում միջազգային կազմակերպությունների աջակցությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակն աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում

2008թ. դրությամբ աշխարհում կար 33,4մլն ՄԻԱՎ-ով ապրող մարդ. նրանց գերակշիռ մասը՝ 22,4մլն-ը բնակվում էր Սահարայից հարավ ընկած Աֆրիկայում, իսկ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, որի մեջ մտնում են նաև Հայաստանը և նախկին խորհրդային Միության հանրապետությունները, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը հասել է 1,5մլն-ի:

2008թ. ընթացքում մոտ 2,7 մլն մարդ է վարակվել ՄԻԱՎ-ով. նրանցից 110 հազարը՝ մեր տարածաշրջանում. դա ավելի քան 3,5 անգամ գերազանցում է Արևմտյան Եվրոպայում և 2 անգամ՝ Հյուսիսային Ամերիկայում նոր դեպքերի թվին:

2008թ. ընթացքում ՁԻԱՀ-ից մահացել է մոտ 2 մլն մարդ. նրանցից 87 հազարը մեր տարածաշրջանում:

2008թ. դրությամբ աշխարհում կար ՄԻԱՎ-ով ապրող 2,1 մլն երեխա: 2008թ. ընթացքում ՄԻԱՎ-ով վարակվել է 430 հազար երեխա, իսկ 280 հազարը մահացել է:

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից:

1988թ. մինչև 2009թ. դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 808 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 134-ը՝ 2009թ. ընթացքում:

ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 590 մարդ (73%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 218 դեպք (27%): ՄԻԱՎ վարակի 16 դեպք (2%) է արձանագրվել երեխաների մոտ:

ՄԻԱՎ-ով վարակվածների գրեթե 60%-ը 25-39 տարիքային խմբում է:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (50%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (41,2%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (2%), մորից երեխային (1,9%) և արյան միջոցով (0,2%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր: 4,7% դեպքերում փոխանցման ուղին անհայտ է:

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 371-ի մոտ (կին՝ 85, երեխա՝ 8) ախտորոշվել է ՁԻԱՀ, ընդ որում 78-ի մոտ՝ 2009թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան 200 դեպք: Մահացածների թվում կան 33 կին և 4 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ, ընդ որում՝ նրանց մեծամասնությունը ժամանակավոր բնակվել և, հավանաբար, ՄԻԱՎ-ով վարակվել է ՌԴ-ում ու Ուկրաինայում: Բացի այդ, բոլոր ՄԻԱՎ վարակով հիվանդ տղամարդկանց մեծամասնությունը (57%) նույնպես թմրամիջոցների ներարկային օգտագործող է, իսկ գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (98%):

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաք Երևանում՝ 352 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 43,6%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 10,4%:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 2300: